Կայնըցըցուց քեառսուն մարդ (էն քեառսուն մարդու սըրտ տը հաշտեցըցի, յիտիւ[1]) աղջիկ տանի). Բաղդասար տղէն զինքն էլ կայնաւ մէջ. աղջիկ, Սանասար տղէն կայնան մէջ տեղ։ Բաղդասար ասաց. «Աղջի, Աստուած որ կ'սիրիս, ես իմ ղբե խանե տիւս քեռ թախտից, տիւ մ'ասի, թէ Բաղդասար տղէն աղէկ ի, ես էնդուր խիտ էրթամ. Աստուած ինչ կ'սիրիս, քեռ սըրտ որին կ'ուզի էս քեառսուն մէկից, էնդուր ձեռ բռնա, գնա»։

Իրիք անգամ ասաց, իրիք անգամն էլ գնաց, Բաղդասար տղի ձեռ բռնից։

Բաղդասար ասաց. «Ա՜յ կարիբ ախպէրնիր, տիւ ռազի[2]) կ'էլ-նի՞ք՝ էս աղջիկ տանիմ, էնուր խիտ ուախուրթիւն էնիմ, կեանք վայելիմ էդու խիտ»։

Քեառսուն մարդ դարձան, ասըցին. «Բաղդասա՛ր տղայ, մինք շատ շնիւրակալ ինք քենէ, ինչ որ տիւ զմե եաշ[3]) դարձըցիր ջահիլուրթեն. տա՛ր, խէր տեսնաս մօտէն»։ Բաղդասար տղէն ըսաց. «Աղջի, քառասունի ձեռ բռնէ, քառասունից շնիւրակալուրթին էրա՛»։

Շնիւրակալուրթին արից, քառսունի ձեռ բռնից։

Դարձան ինունք իրանց տնիր. Սանասար, Բաղդասար էկան Սասում։

Բաղդասար տղէն պսակիցին, էնու ուրախուրթին էրիցին։ Վարտապիտն էր, գինաց մէ յիւրիշ թագաւորի աղջիկ էլ բիրից. բիրից, Սանասար տղէն էլ պսակից*)։

---

[1]) Յետոյ։ [2]) Համաձայն։ [3]) Հասակ։

*) Այս ճիւղը պատմել է մի ուրիշ Մոկացի, որ շատ տարիներից ի վեր բնակուում էր Շիրակում, ուստի և լեզուն խիստ աղաւաղուած է ու բաղմատեսակ. դրանից է առաջացել այն, որ միևնոյն բառը, ինչպէս ընթերցողը կըտեսնի, երեք-չորս տեսակ է գրուած, թէ ձայնաւորների և թէ բաղաձայնների փոփոխուրթեան նկատմամբ։ Բացի սորանից այդ Մոկացին պատմել է և Դաւթի և Մհերի մասին, բայց մեծ նմանուրթիւն ունենալով հետևեալ ճիւղի հետ, աւելորդ համարեցինք այստեղ զետեղել։